ՊԱՏՄԵ՛Ք, ՑՈ՛ՒՅՑ ՏՎԵՔ, ՄԻ՛ ԼՌԵՔ

Posted on October 6, 2024 by Keghart



Category: Opinions

Անուշ Գասպարյան, ԾԻԼ համայնք, ԱՄՐՈՑ հիմնադրամ, Երևան, 2 հոկտեմբեր 2024

Ո՞րն է փաստավավերագրական ֆիլմերի առավելությունը, ո՞րն է դրանց նշանակությունը, ո՞ւմ համար են նկարահանվում դրանք:

Օրերս ներկա էի մի հայրենանվեր նախաձեռնության բացման արարողությանը: Հյուրերը քիչ էին: Հայկական բարեգործական ընդհանուր միության Երևանի կենտրոնի դահլիճը թեև ամբողջությամբ լցված չէր հանդիսատեսներով, բայց հորդում էր զգացմունքներով, հուշերով ու հույզերով: Ներկա էին PlatformDoc նախաձեռնության աշխատակիցները:

Նշանավորելով 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հոկտեմբերի 3-ը ընկած ժամանակահատվածում արցախյան դեպքերը՝ PlatformDoc-ը կազմակերպել է Արցախի մասին պատմող վավերագրական ֆիլմերի անվճար ցուցադրություն Երևանում և մարզերում: Նախագծի թիրախը պատանիներն ու երիտասարդներն են, դպրոցականներն ու ուսանողները: Ընտրված ֆիլմերը պատմում են ոչ միայն վերջին տարիների դեպքերի մասին, այլև Արցախյան առաջին պատերազմի, դրա հետևանքների մասին: Նախագծի ղեկավար, կինոարտադրիչ Արևիկ Ավանեսյանի խոսքերով սա շատ զգայուն թեմա է և քչերն են համարձակվում բարձրաձայն խոսել այս հարցերի մասին: Բայց, իմ համոզմամբ, պե՛տք է խոսել, ա՛նպայման բարձրաձայնել:

Այո՛, ես համաձայն եմ, պե՛տք է խոսենք, շատ կարևոր է, որ չլռենք, քննարկենք, վերլուծենք, բայց նաև գործենք, քայլեր մշակենք, նախագծեր իրականացնենք, անենք մեր ուժերի սահմանում ամեն բան: Հատկապես կարևոր է ականատեսի, այդ ամենը վերապրած մարդու խոսքը: Իսկ վավերագրական ֆիլմերը շատ հարմար հարթակ են խոսքի պահպանման ու տարածման համար:

Ի՞նչ է PlatformDoc-ը: Այն ստեղծվել է հայկական վավերագրական ֆիլմերի տարածման և հանրայնացման համար: Յուրաքանչյուր ֆիլմի մասին մանրամասն տեղեկություն կարելի է գտնել PlatformDoc-ի ֆեյսբուքյան էջում և պաշտոնական կայքէջում:



Ա նտեղյակ մարդուն կարճ տեսանյութով էլ պարզ է դառնում, թե իրականում ինչպիսի մեծ պահանջարկ ունի այս ժանրը աշխարհում, ինչո՞ւ մրցանակներ են տրվում այս ֆիլմերի հեղինակներին, ի՛նչ հնարավորություններ են բացվում նրանց առջև: Ծրագիրը նպատակ ունի նաև տարածելու վավերագրական ֆիլմերը մեր միջավայրում, հատկապես մեր մասին պատմողները:

Ներկա էի ծրագրի բացմանը, որը կայացավ հենց սեպտեմբերի 19-ին: Խոսեցին նախագծի աջակիցները: Ներկա էին նաև ֆիլմերի ստեղծագործական խմբերի անդամներ: Դիտեցինք երկու կարճ ֆիլմեր՝ «Արմատ» և «Մայրենիք»:

Առաջինը բարդ էկոհամակարգ հանդիսացող անտառի միջոցով բարձրացնում էր համակարգի միասնության խնդիրը: Հարց է ծագում՝ ի՞նչ կլինի, եթե հարյուրամյակներ անտառում աճած, հողի մեջ ամրացած ծառը որոշեն տեղափոխել: Տարիներ շարունակ այդ հողում լինելով՝ ծառը արմատներով ամուր կառչում է հողին, սակայն արմատները շատ փխրուն են, և շատ երկար ժամանակ է հարկավոր, որ նոր հողում շարունակեն աճել նույն կերպ, եթե, իհարկե, ի վերջո հարմարվեն: Անտառի վրա էլ դա ունի բացասական ազդեցություն. թուլանում է ամբողջ համակարգը: Իսկ հիմա պատկերացրեք, որ մի անտառում 120000 ծառ կա, ու ամբողջն արմատախիլ են անում:

Արցախից 120000 հոգի արմատախիլ է եղել, շատերի դեպքում արդեն երևում են դառնալի հետևանքները, մյուսների մասին դեռ կլսենք: Սա հոռետեսություն չէ, սա այն է, ինչ կատարվում է բնության մեջ, ինչը գրեթե անզոր ենք փոխել, եթե մարդիկ չվերադառնան իրենց հողին, իրենց տուն ու տեղին…

Երկրորդ ֆիլմը՝ «Մայրենիքը», շատ կհավանեն կանանց իրավունքների պաշտպանության շարժման գաղափարակիցները, բայց ես սա կորակեի նախ արցախցու, ապա արցախցի կնոջ պատմություն: Ֆիլմը պատմում է պատերազմի հետևանքով ընտանիքի բեռն իրենց ուսերին առած կանանց մասին, ովքեր իրենց երեխաների, քույրերի, եղբայրների, սիրելիների ապրուստը հոգալու համար սկսել են զբաղվել ականազերծմամբ: Ինչո՞վ է այս պատմությունը հատկանշական. նրանով, որ մինչ ֆիլմում ներկայացված կանանց խումբը, ականազերծման աշխատանքներով զբաղվում էին միայն տղամարդիկ, որևէ մեկի մտքով չէր անցնում, որ կանայք ևս կարող են: Ֆիլմի հերոսուհիների խոսքերը լսելով, չես էլ կասկածում, որ կանայք ևս կկարողանան հաջողությամբ ականազերծել տարածքները: Այստեղ գերակա դեր ունի ոչ թե մարմնական, այլ ոգու ուժը: Ամեն մեկը չէ, որ կանցնի նման վտանգավոր աշխատանքի, սակայն երբ կա խթան, երբ կա սեր ազգի հանդեպ և ցանկություն օգտակար լինելու այդ ազգին, այո՛, շատ մեծ ուժ է արթնանում քո մեջ: HALO Trust կազմակերպության կանանց խումբը հենց այդպես էլ նշում է. նրանք չեն ուզում որ իրենց խղճան: Նրանք պարզապես ուզում են որ արդյունավետ օգտագործվեն իրենց կարողությունները:

Դիտել եմ ընդամենը երկու ֆիլմ, որոնք խոսում են նույն դեպքի տարբեր հետևանքների մասին: Թեև ամեն ֆիլմ ունի իր ուրույն պատմությունը, բայց որքան էլ դրանք իրարից տարբերվեն, միևնույնն է, նման են, մարդիկ, միևնույնն է, հասկանում են իրար, կիսում ընդհանուր վիշտը: Դիտողը եզրակացնում է, որ ամեն մեկը կարող է իր պատմությունը ներկայացնել, և ո՛ր ֆիլմն էլ նայենք, կհասկանանք, թե ինչ ծանրածանր ուղիով են անցել մեկ տարի առաջ տեղահան-արմատախիլ եղած արցախցիները:



Ես ինքս ողջունում եմ այս նախաձեռնությունը, որ հնարավորություն է տալիս մեզ՝

երիտասարդներիս, դիտել այս ֆիլմերը, մտածել այս հարցերի շուրջ, հասկանալ, թե ինչ է կատարվում մեր շուրջը: Արդեն ժամանակն է, որ մենք էլ մասնակցենք որոշումների կայացմանը, իսկ մեր այդ իրավունքի ապահովումն ու պահպանումը հենց մե՛նք պետք է պահանջենք: Եվ ես շատ ուրախ եմ, որ այս ողբերգությունն էլ է դարձել արվեստածին. մեր արցախցի արվեստագետները գտել են իրենց ցավի ճիչն ու մորմոքը արտահայտելու հրաշալի եղանակ՝ իրականության պատկերները համայն աշխարհին մատուցելով և իրենց լինելիության մասին վկայելով:

*****

There are no comments yet.